31.03

2750

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար

Համբարձում Մաթևոսյան

«31» 03 2026թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 036 - 26

Նախաձեռնող՝ ***«ԴԱՀԱ» ՍՊԸ***
Երևան, Լենինգրադյան փ. շ. 31/30

Գործունեություն ***Ոչ մետաղական օգտակար հանածոյի արդյունահանում***
Արագածոտնի մարզ, Արևուտ համայնք, Թլիկ բնակավայր

Առդիր՝ 6 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 036 - 26

«31» Մարտի **2025թ.**

Թլիկի կոպճային ավազի հանքավայրի արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Ձեռնարկող՝	«ԴԱՀԱ» ՍՊԸ
Ներկայացված նյութեր՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն, նախագծային փաստաթուղթ /Ա կատեգորիա/
Գտնվելու վայրը՝	Արագածոտնի մարզ, Արևուտ համայնք, Թլիկ բնակավայր

Ներածական մաս. Արագածոտնի մարզի Թլիկի կոպճային ավազի հանքավայրը գտնվում է Արագածոտնի մարզի Արևուտ համայնքի Թլիկ բնակավայրի վարչական տարածքում, Թլիկ բնակավայրից 1,2 կմ, Անիպեմզա բնակավայրից 3,6 կմ, Գետափ բնակավայրից՝ 4,0 կմ հեռավորությունների վրա:

Հայցվող տարածքի հողերը ներկայացված են գյուղատնտեսական ու արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողերով:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի թ. ենթակետի՝ նախատեսվող գործունեությունը դասակարգվում է որպես Ա կատեգորիայի գործունեության տեսակ:

Նկարագրական մաս. Նախատեսվող գործունեության նպատակն է Արագածոտնի մարզի Թլիկի կոպճային ավազի հանքավայրից իրականացնել ավազի արդյունահանում:

Տեղամասի օգտակար հանածոյի պաշարները հաստատվել են տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 22.10.2024թ.-ի N 2510-Ա հրամանով: Հանքավայրում հաշվարկվել են B կարգի 918.1 հազ.մ^3 հաշվեկշռային պաշարներ:

Հանքավայրի շահագործումը նախատեսվում է իրականացնել բաց եղանակով: Ընդունվում է երկայնական-միակողմանի մշակման համակարգ:

Հանքավայրի տարածքում նախկինում կատարվել են օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքներ ընդհանուր առմամբ արդյունահանվել է մոտ 22.5 հազ.մ^3 լեռնային զանգված,

այդ թվում՝ 15.5 հազ.մ³ օգտակար հանածո: Արդյունահանումն իրականացնողների մասին տեղեկությունները բացակայում են»:

Ընդհանուր մարվող պաշարների քանակը կազմում է՝ 918059.9մ ³ :

Տարեկան մարվող պաշարների քանակը կազմում է՝ 105869.0մ ³ :

Ընդհանուր կորզվող պաշարների քանակը կազմում է՝ 865606.9մ ³ :

Տարեկան կորզվող պաշարների քանակը կազմում է՝ 100000.0մ ³ :

Բացահանքի օտարման տարածքը կազմում է 18.6հա,

Արտադրական հրապարակի մակերեսը կազմում է 0.4հա,

Ծառայման ժամկետը՝ 8.7 տարի:

S = 18.6հա:

N	X	Y	N	X	Y
1	8384480.212	4476923.007	12	8384417.875	4476392.059
2	8384525.689	4476720.954	13	8384351.118	4476345.218
3	8384704.119	4476774.703	14	8384318.949	4476310.320
4	8384724.424	4476693.782	15	8384282.569	4476309.206
5	8384736.423	4476673.066	16	8384211.385	4476307.027
6	8384669.302	4476637.731	17	8384177.981	4476361.330
7	8384610.416	4476609.162	18	8384152.432	4476468.066
8	8384581.365	4476544.498	19	8384204.027	4476635.530
9	8384520.426	4476477.674	20	8384267.240	4476736.836
10	8384492.710	4476433.750	21	8384331.785	4476845.820
11	8384458.717	4476417.513	22	8384464.190	4476914.675

Արտադրական հրապարակի անկյունային կետերի կոորդինատներն են.

N	X	Y
1	8384335.069	4476902.367
2	8384310.750	4476852.656
3	8384330.018	4476846.863
4	8384428.540	4476897.820
5	8384423.385	4476916.167

Կատարվելու են հետևյալ նախապատրաստական աշխատանքները՝

- մոտեցող ավտոճանապարհի կարգաբերում - 4500մ² ,
- արտադրական հրապարակի կարգաբերում - 4000մ² ,

Արդյունահանման աշխատանքները կատարվելու են վերևից ներքև շերեփման եղանակով, 1.6 մ³ շերեփի տարողությամբ JCB JS 305 LC մակնիշի էքսկավատորով: Արդյունահանված զանգվածը SHACMAN X3000 և HOWO TX SINOTRUK ավտոինքնաթափերի մեջոցով տեղափոխվելու է նախատեսվող ՋՏ կայանք: ՋՏ կայանքից դուրս եկած պատրաստի հումքի բարձումը սպառողի մեքենա կատարվելու է 3.0 մ շերեփի տարողությամբ XCMG LW550FN բարձիչով:

Ջարդիչ տեսակավորող կայանքը (MIHAN SANG SHEKAN մակնիշի) նախատեսվում է տեղադրել արտադրական հրապարակում, ինչը կազմակերպվելու է անմիջապես նախագծվող բացահանքի հյուսիսային հատվածի եզրին: ՋՏ կայանքի արտադրողականությունն ըստ վերամշակվող հումքի օրական կազմելու է 500մ³: Պատրաստի հումքը պահեստավորվելու է արտադրական հրապարակում, որտեղ ժամանակավոր կկուտակվեն առավելագույնը 2000մ³ կոպճային և ավազային նյութեր: Արտադրական հրապարակից ավազը տեղափոխվելու է սպառողների ավտոինքնաթափերով:

Հումքը ենթարկվելու է քարմաղման՝ չոր եղանակով: Քարմաղի արգասիքների 14,4 %-ը կազմում է խոշոր ֆրակցիան, այն ուղղվելու է ջարդման՝ ռոտորային ջարդիչում, այնուհետև՝ քարմաղման: Արդյունքում ստացվելու է 3 դասի պատրաստի խիճ և ավազ: Առաջին քարմաղի ստորին դասը (85,6%-ը) տրվելու է դասակարգման պարույրավոր դասակարգիչին: Դասակարգումն իրականացվելու է թաց եղանակով: Պատրաստի արտադրանքը ենթարկվելու է չորացման բնական եղանակով: Մանր դասը խյուսի տեսքով ուղղվելու է 8×12×2 մ չափերով պարզարան: Պարզարանի պարզվածքը վերադարձվելու է դասակարգիչ:

Տեխնիկական ջրամատակարարումն իրականացվելու է Ախուրյան գետից խողովակաշարի և պոմպակայանի միջոցով: Նախնական հաշվարկային ջրապահանջը կազմում է 16 լ/վ: Ջուրն օգտագործվելու է ջարդման-տեսակավորման գործընթացում՝ հումքի լվացման, փոշենստեցման և շրջանառու համակարգի լրասնուցման համար:

Մթնոլորտային օդի վրա ազդեցությունը պայմանավորված է օգտակար հանածոյի արդյունահանման, տեղափոխման, ինչպես նաև ՋՏ կայանքի աշխատանքով: Գնահատվել են շրջակա միջավայրի վրա ազդեցությունները, ներառյալ գումարային ազդեցությունները ինչպես բացահանքի, այնպես էլ արտադրական հրապարակի վրա:

Արտադրական հոսքաջրերն ուղղվելու են պարզեցման ավազան և մաքրումից հետո վերադառնալու են արտադրություն: Աղտոտող նյութերի արտահոսք բաց ջրավազաններ տեղի չի ունենալու:

Խմելու ջուրը նախատեսվում է մատակարարել խմելու ջրի համար նախատեսված տարաներով:

Փոշենստեցման նպատակով պետք է փոշեառաջացման օջախները /արտադրական հրապարակ ավտոճանապարհներ/ պարբերաբար ջրվեն:

Աշխատակիցների բնական կարիքների համար կտեղադրվի զուգարան՝ բետոնային անջրաթափանց լցարանով, որտեղ կկազմակերպվեն նաև կենցաղային կեղտաջրերը:

Արտադրական հրապարակում նախատեսվում է կազմակերպել արտադրական հրապարակից դուրս եկող տրանսպորտային միջոցների անվադողերի լվացման կետ:

Տարածքի ստորին հատվածում կկառուցվեն երկու ջրհեռացման առուներ, որոնք կմիանան առուների միջնամասում տեղադրված խողովակին: Անվադողերի լվացումից առաջացած կեղտաջրերը խողովակով կուղղվեն բետոնային անջրաթափանց լցարան: Կենցաղային կեղտաջրերը և կենսագործունեության արգասիքները, ինչպես նաև անվադողերի լվացումից առաջացած կեղտաջրերը համապատասխան կազմակերպությունների կողմից, պայմանագրային կարգով, պարբերաբար կհեռացվեն:

Օգտակար կուտակը ծածկող ավազակավային ապարները տեղադրվելու են ներքին լցակույտերում, որոնց մակերեսը վերջնարդյունքում կկազմեն մոտ 6 հա, իսկ բարձրությունը 3մ, որոնք հետագայում կօգտագործվեն լեռնային աշխատանքներով խախտված տարածքում իրականացվելիք բարեկարգման աշխատանքների համար:

ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
ОЦЕНКИ ВОЗДЕЙСТВИЯ НА ОКРУЖАЮЩУЮ СРЕДУ
ENVIRONMENTAL IMPACT ASSESSMENT
ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

Բացահանքի սկզբնական փուլում հողի բերրի շերտի մի մասը պահեստավորվելու է արտադրական հրապարակում՝ լայնակոյտերով, առավելագույն բարձրությունը՝ 3մ, իսկ զբաղեցրած մակերեսը՝ 600մ^2, նախատեսվում է պահեստավորել արդեն իսկ մշակված տարածքներում, որոնք հետագայում կօգտագործվեն լեռնային աշխատանքներով խախտված տարածքում իրականացվելիք բարեկարգման աշխատանքների համար:

Ըստ հաշվետվությունում եղած տեղեկատվության՝ հայցվող տարածքում ՀՀ բույսերի և կենդանիների Կարմիր գրքերում գրանցված տեսակներ, պատմության, բնության հուշարձաններ առկա չեն:

Շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն և մեղմացմանն ուղղված մշտադիտարկումների իրականացման նպատակով նախատեսվում է տարեկան մասնահանել 1500.0 հազ.դրամ:

Ընդամենը ռեկուլտիվացիայի համար նախատեսվում է մասնահանել 5376638.6ՀՀ դրամ,

Ռեկուլտիվացիայի ենթակա տարածքը կազմում է 20.0 հա, որից 18.6 հա-ը նախագծվող բացահանքի տարածքն է, իսկ 0.4 հա արտադրական հրապարակի մակերեսը:

Ըստ հաշվետվությունում եղած տեղեկատվության՝ հայցվող տարածքում ՀՀ բույսերի և կենդանիների Կարմիր գրքերում գրանցված տեսակներ, պատմության, բնության հուշարձաններ առկա չեն:

Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա վնասակար ազդեցության մեղմացման/վերացման նպատակով նախատեսվում են հետևյալ բնապահպանական միջոցառումները.

-լեռնային տեխնիկայի շարժիչների վառոցքները պետք է լինեն կարգավորված, ինչը կնվազեցնի մթնոլորտ արտանետվող գազերի քանակը,

-մեքենաների շարժիչները պետք է կահավորված լինեն կատալիտիկ չեզոքացուցիչներով, ինչը թույլ կտա կրճատել գազերի արտանետումը մթնոլորտ,

- տաք և չոր եղանակին արտադրական հրապարակը, մերձատար ճանապարհները ջրցանվելու են, ինչը թույլ կտա կրճատել փոշու արտանետումները,

-թափոնները պարբերաբար դուրս են բերվելու բացահանքի տարածքից և տեղադրվելու են հատուկ նախատեսված հարթակներում կամ վաճառվելու են,

-ավազը, խիճը, այլ սորուն նյութերը, հողային զանգվածները, ինչպես նաև աղբը տեղափոխվելու են փոշու համար անթափանց ծածկոցներով ծածկված տրանսպորտային միջոցներով,

-շահագործման ընթացքում՝ համապատասխան ջրօգտագործման թույտվություն ստանալուց հետո նախագծվող բացահանքի արևմտյան հատվածի ամբողջ երկարությամբ իրականացվելու են ծառատնկման աշխատանքներ:

-աշխատանքների ընթացքում բացառվելու է տեխնիկա-տրանսպորտային միջոցների երթևեկությունը ճանապարհներից և արտադրական տեղամասերից դուրս:

-Արտադրական հրապարակներում, հանքախորշերում, ճանապարհներին և այլ արտադրական տեղամասերում, հատկապես չոր եղանակին, մշտապես կիրառել ջրցան մեքենաներ փոշենստեցման համար, օրը 2 անգամ:

- Տեխնիկական միջոցների վառելիքաքսուքային (յուղ, դիզել, բենզին և այլն) նյութերի վթարային արտահոսքը բացառելու համար տեխնիկա-տրանսպորտային միջոցները շահագործել միայն սարքին վիճակում:

-Կարմիր գրքում գրանցված բուսատեսակների հայտնաբերման դեպքում առանձնացնել տվյալ պահպանվող գոտին: Կենդանական աշխարհի ներկայացուցիչների բնադրման և թխման

ժամանակամիջոցում հնարավորինս նվազեցնել տեխնիկական միջոցների կիրառմամբ աշխատանքները:

Աշխատանքների իրականացման ընթացքում ընկերությունն իրականացնելու է շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն ու մեղմմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

- մթնոլորտային օդի որակի մշտադիտարկումներ շաբաթական մեկ անգամ,
- հողային ծածկույթի մշտադիտարկումներ՝ տարեկան մեկ անգամ,
-ջրերի մշտադիտարկումներ՝ ամսական մեկ անգամ,
-աղմուկի մակարդակի չափումներ՝ ամսական մեկ անգամ,
-կենսաբազմազանության մշտադիտակումներ՝ տարածքին բնորոշ վայրի բնության ներկայացուցիչների քանակի, աճելավայրերի և ապրելավայրերի տարածքի, պոպուլյացիայի փոփոխության ՝ տարեկան մեկ անգամ:

Պատճառաբանական մաս. Օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Արագածոտնի մարզի Թլիկի կոպճային ավազի հանքավայրի արդյունահանման աշխատանքների վերաբերյալ իրականացվել են հանրային լսումներ Արագածոտնի մարզի Արևուտ համայնքի Թլիկ բնակավայրում, որոնց ընթացքում մասնակիցները հավանություն են տվել նախատեսվող գործունեության իրականացմանը: Փորձաքննական գործընթացին մասնակցել են շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, առողջապահության, ներքին գործերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները, կադաստրի կոմիտեն, Արագածոտնի մարզպետարանը, Արևուտի համայնքապետարանը: Նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները կկրեն ժամանակավոր բնույթ և բնապահպանական միջոցառումների իրականացման արդյունքում կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում:

Փորձաքննական պահանջներ

- Աշխատանքների իրականացման ընթացքում պարբերաբար իրականացնել շրջակա միջավայրի բաղադրիչների մոնիթորինգ և արդյունքները Կառավարության 2018թ. փետրվարի 22-ի N191-Ն որոշմամբ սահմանված ժամկետներում և ձևաչափով ներկայացնել շրջակա միջավայրի նախարարություն:
-Աշխատանքների իրականացման ընթացքում խստագույնս հետևել գնահատման հաշվետվությունում ամրագրված բնապահպանական միջոցառումների իրականացմանը, իսկ դրանց չբավարարման դեպքում նախատեսել լրացուցիչ միջոցառումներ՝ ապահովելով բնապահպանական նորմերը:
- ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական հաշվառման, ուսումնասիրման, պահպանության, ամրակայման, նորոգման, վերականգնման և օգտագործման կարգը հաստատելու մասին» N438 որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի համաձայն՝ աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից անհրաժեշտ է դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ տեղեկացնել լիազոր մարմնին՝ համապատասխան պահպանման միջոցառումներ իրականացնելու համար:

-Աշխատանքների իրականացման գործընթացում ներգրավել ազդակիր բնակավայրի բնակիչներին, ինչպես նաև համայնքի ղեկավարության հետ քննարկել անհրաժեշտ օգնության ծրագրեր և համապատասխան ֆինանսական ներդրումներ կատարել համայնքային բյուջե:
-Երևակման տարածքում ՀՀ Կարմիր գրքում գրանցված կենդանիների հայտնաբերման դեպքում, ընկերությունը պարտավոր է միջոցներ ձեռնարկել դրանց պահպանության համար, բացառելով տեսակների թվաքանակի կրճատումը և դրանց ապրելավայրերի վատթարացումը: Միջոցառումները պետք է համաձայնեցվեն պետական կառավարման լիազոր մարմնի հետ:
-Անհրաժեշտ է արդյունահանումն իրականացնել ջրօգտագործման թույլտվություն ստանալուց հետո:
-Անհրաժեշտ է իրականացնել կանաչապատման աշխատանքներ, առաջնորդվելով կառավարության 2018 թվականի փետրվարի 8-ի «Բնակավայրերի կանաչ գոտիների չափերին և տեսակային կազմին ներկայացվող պահանջները սահմանելու և ՀՀ կառավարության 2008 թվականի հոկտեմբերի 30-ի N 1318-ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» որոշման պահանջներով:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«ԴԱՀԱ» ՍՊԸ-ի կողմից փորձաքննության ներկայացված Արագածոտնի մարզի Թլիկի կոպճային ավազի հանքավայրի արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է պետական փորձաքննական դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունները կատարող՝ Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի առաջատար մասնագետ՝ Գոհար Մինասյան